

քի վերայ. անտարակոյս կհամաձայնի մեզ հետ թէ Լոնդոնի օրինակը լիապէս գործադրելի է բոլոր արհեստաշահ տեղերի վերաբերութեամբ. իսկ ներկայումն հազիւ թէ աշխարհումն շատ քաղաքներ գտնուին, ուր՝ գոնեա՝ գործարանի մի քանի ծխնելոյց չմիսացնէին երկինքը:

Շաբանակելի,

(Թարգմ.) Բժ. Մ. Զ.

ԱԶԳԱՅԻՆ

Երարատի Սեպտ. ամսագրի ընթերցողներին յայտնի է Պարսից արեգակնախայլ Կասրէտտին Շահի շնորհած շքանշանն առ Ա. Եհ. Հայրապետն Ազգիս, որի առթիւ տուած հրովարտակն ևս հրատարակում ենք՝ առնելով Երճագանք շաբաթաթերթից:

(ՏԵՂԻ ԿԱՔՈՑ)

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՖԻՐՄԱՆ ԱՌ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Յիսուսի առաքինութեանց ժառանգորդ և հրեշտակապետաց դաստիակից Արքազնագոյն Մակար, գերագոյն Գլուխ Ա. Էջմիածնի և Ղեկալվար երկրագնդիս ամենայն Հայոց, մաղթեմք Զեղ յաւիտեան մհալ ընդ հովանեաւ Ամենաբարձրելոյն:

Ի վկայութիւն Մեր արքայական բարեհաճութեան և մտերմութեան առ Զեր Արքութիւնը, որ տոգորուած էք պետական բարձր զգացմունքներով, որ ընծայած էք Զեր բովանդակ կեանքը քահանայապետական խնամքիդ յանձնուած բոլոր հայկազեան հօտի կատարելութեան և մանաւանդ բարոյական զարգացման և շինութեան, մենք հաճեցանք և լիովին արդար ու պատշաճ դատեցինք երեւելի կացուցանել Զեր Արքութիւնը Մեր առանձին շնորհքի և յատուկ բարեմիրութեան արտայայտութեամբ առ Զեղ:

Աւստի շնորհում ենք Զեղ Մեր աղամանդեայ կենդանագիրը, որ ամենառաջնակարգ պետական պաշտօնեաների պարզետ-տրութեան բարձրագոյն նշանն է, և առաջել Զեղ այդ ի ձեռն Գերազատիւ և մեծարելի հովութին Պարսկաստանում և Հընդ-կաստանում բնակող Հայոց՝ Գրիգորի, որ յայտնի է իւր պար-կեշտ վարքով և կատարեալ բարեմտութեամբ։

Այս արտաքին պատույ նշանը թող Զեր Սրբութեան առջե յայտարար լինի Մեր թանգագին ուշադրութեան և սրտագին հաճութեան առ Զեր անձնաւորսւթիւնն և միանգամայն քա-ջալեր Զեր հանդերձեալ բարերար գործունէութեան։
Մի մոռանաք Մեզ Զեր աղօթքների մէջ. իսկ Մենք մաղթել էինք և մաղթումենք Զերդ Սրբութեան կալ և մնալ ողորմութեամբն Առուծոյ Հովուապետ և Ղեկավար Հայաստանեայց Եկեղեցւոյ,
Եկղուակ ամիս 1305թ. (1888)։

Սեպտ. 24ին Ս. Գէորգայ տօնի օրն նախընթաց տարիների նման փառաւոր հանդիսով կատարուեցաւ Մայր Աթոռոյս Ճե-մարանի քացման ժԴ. տարեդարձն։ Զկնի Ս. Պատարագի միաբա-նութիւն Մ. Աթոռոյս մերձաւոր գեղերից եկած ուխտաւորք և Վաղարշապատու ժողովուրդք համախմբեցան Ճեմարան։ Հանդի-սարանում սկսեցաւ սովորական հոգեհանգստեան պաշտօն Եր-ջանկայիշատակ հիմնագիր Գէորգ Դ. Կաթողիկոսի։ ապա սկսաւ տարեդարձի հանդէսն ներդաշնակ երգերով և ճառերով. նախ Պ. Արշակ Նահապետեան Տեսուչ Ճեմարանի կարդաց տարեկան տեղեկագիրն, ապա Ռուսաց լեզուի ուսուցիչ Պ. Յովհաննէս Յովհաննիսեանց կարդաց մի գեղեցիկ ճառ զոր ընթերցողներ կըգտնեն սոյն թուի մէջ, Պ. Տեսչի տեղեկագրի հետ; Յետ որոյ Գեր. Գրիգորի Սրբեպիսկոպոս նոյն օրուան պատարագիչն մի հսմառօտ ատենաբանութեամբ բացատրեց Ս. Էջմիածնի բարո-յական կապն, որով իսփիւռո աշխարհաց ցրուեալ հայեր պինդ հանգուցով կապուել են Ս. Էջմիածնի հետ, և յարեց թէ «յօ-րէ հիմնարկութեան Ս. Էջմիածնի եղել են Էջմիածնում Ժա-ռանգաւորաց ուսումնաբաններ», որք երբեմն յաջող հանգա-մանքի մէջ մեծ փայլ առուած են ողգին, քաջուս հոգեռորական-ներ հասցնելով և երբեմն ժամանակի դառնութեամբ նուա-